ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 1

Ք.Երևան «28»«04» **2015թ.**

ՀՀ աշխատանքի և սոց հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության Նոր-Նորքի տարածքային կենտրոնը (հետագայում Պատվիրատու),ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար **Արտակ Գրիգորյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա մի կողմից, և "Երևանի հ. 105 Մանկապարտեզ " ՀՈԱԿ-ը (հետագայում Կատարող),Ի դեմս տնօրեն ՝ **Անժելա Քեհյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Նոր Նորքի 3-րդ զանգվածի Բաղյան 2 հասցեում գտնվող կաթսայատան շահագործման և սպասարկման համար ինչպես նաև կոմունալ ծախսերը կատարվելու են Կատարողի կողմից:

1.2 Պատվիրատուն զբաղեցնում է Բաղյան 2 հասցեում գտնվող շենքից 224.8 քառ մետր տարածք, որը կազմում է ամբողջ շենքի 14%-ը:

1.3 Պատվիրատուն պարտավորվում է կատարողին փոխհատուցել իր զբաղեցրած տարածքում փաստացի օգտագործած ջեռուցման ինչպես նաև կաթսայատան էլեկտրաէներգիայի արժեքը:

1.4 Պատվիրատուն պարտավորվում է 1.1 կետում նշված փաստացի ծախսերի համար վճարել սույն պայմանագրի 4-րդ կետում սահմանված կարգով:

2.Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

2.1 Կատարողը ապահովում է Նոր Նորք 3-րդ զանգված, Բաղյան 2 հասցեում գտնվող Պատվիրատուի կողմից զբաղեցված 224.8 քառ մետր տարածքի ջերմության անխափան սպասարկումը:

2.2 Պատվիրատուն փաստացի կատարված ծախսերի համար վճարում է սույն պայմանագրի 4-րդ կետում նախատեսված ժամկետում:

2.3 Պատվիրատուն ներքին ցանցի վթարները պարտավոր է վերացնել սեփական միջոցներով:

3.Մատուցված ծառայությունների հանձնման և ընդունման կարգը

3.1 Կատարողը Պատվիրատուին ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանում փաստացի կատարված ծախսերի և Պատվիրատուի կողմից 4,1 կետում նախատեսված ծախսերի փոխհատուցման հանձնման- ընդունման ակտ:

3.2 Ակտում նշվում են՝

ա. Փաստացի իրականացված ծախսերի անվանացանկը, քանակը

բ. ծախսերի արժեքը

գ. Փոխհատուցման ենթակա ծախսերի արժեքը

Ակտում կարող են ներառվել ցանկացած այլ տեղեկությունները, որոնց մասին կողմերը անհրաժեշտ կհամարեն նշել:

4. Վճարումների կարգը և չափը

4.1 Սույն պայմանագրով փոխհատուցման ենթակա ծախսերի արժեքը կազմում է Նոր Նորքի 3-րդ զանգվածի Բաղյան 2 հասցեում փաստացի ծախսած գազի, կաթսայատան ծախսած էլեկտրաէներգիայի չափի 14%-ի չափով:

4.2 Մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ջեռուցման համար կատարված փաստացի ծախսի հիման վրա, Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում հաշվետու ամսվա ընթացքում Պատվիրատուի ջերմային էներգիայի համար հաշիվ:

4.2 Փոխհատուցման ենթակա ծախսերի դիմաց հաշվարկները կատարվում են հանձնման –ընդունման ստորագրման պահից ոչ ուշ, քան 3 օր հետո:

4.3 Փոխհատուցման ենթակա ծախսերի համար Պատվիրատուն պետք է վճարի մինչև հաջորդ ամսվա 15-ը: Չվճարված յուրաքանչյուր օրվա համար կտուգանվի պարտքի 0.14% չափով:

5 Պայմանագրի գործողության ժամկետը

5.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

5.2 Սույն համաձայնագրի գործողությունը տարածվում է Կողմերի միջև 2015 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում է անորոշ ժամկետով:

5.3 Սույն պայմանագիրը կարող է ժամկետից շուտ լուծվել կողմերից յուրաքնչյուրի կողմից՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ նախազգուշացնելով:

6. Այլ պայմաններ

6.1 Սույն պայմանագիրը կնքված է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7. **Կողմերի հասցեները և վավերապայմանները**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՍՀՆ ՋՊԳ Նոր-Նորքի ՋՏԿ	"Երևանի հ, 105 Մանկ" ՀՈԱԿ
Հասցե՝ Նոր Նորք 3րդ զ. Բաղյան 2	Հասցե՝ Նոր Նորք 3րդ զ. Բաղյան 2
Բանկը՝ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Բանկը՝ <<Անելիք բանկ>> ՓԲԸ
Հ/Հ900011102044	Հ/Հ 118081005142
ՀՎՀՀ 01506515	ՀՎՀՀ 00822693
Աշխ.ղեկավար	*Տնօրեն՝* ---------- *Ա.Քեհյան*
Ա.Գրիգորյան ----------	
ԿՏ	ԿՏ